Աշխատակարգ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզխորհրդի նիստի

15 փետրվարի 2010թ. ք. Գորիս

Մարզխորհրդի նիստի հարգելի մասնակիցներ, մարզխորհրդի արտագնա նիստի աշխատանքներին մասնակցում են՝

- Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը,
- տարածքային կառավարման նախարարության պատասխանատու աշխատողներ,
- մարզխորհրդի անդամներ,
- մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ,
- հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ,
- զանգվածային լրատվամիջոցների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մարզխորհրդի նիստի օրակարգը բաժանված է Չեզ.

Առաջարկվում է մարզխորհրդի նիստի հետևյալ աշխատակարգը

Օրակարգի առաջին հարցի զեկուցման համար	մինչև 25 րոպե
Օրակարգի մնացած հարցերի համար	մինչև 10 րոպե
Ելույթների համար մինչև	5 րոպե
Հայտարարությունների համար մինչև	3 րոպե

Առաջարկում եմ մարզխորհրդի նիստի աշխատանքներն ավարտել մեկ նիստով

Օրակարգի առաջին հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին:

Հարցեր զեկուցողին

Առաջարկում եմ լսել նաև օրակարգի մնացած հարցերը և անցնել մտքերի փոխանակմանը:

Ելույթների համար խնդրում եմ հերթագրվել

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանին:

Օրակարգի երրորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Քաջիկ Խաչատրյանին:

Օրակարգի չորրորդ հարցի զեկուցման համար խոսքը տրվում է ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանին:

Ելույթի համար խոսքը տրվում է

1. Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին
2. Քարահունջ համայնքի ղեկավար Լուսինե Ավետյանին
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Աշոտ Ծատրյանին
4. Կապանի թիվ 1 կրթահամալիրի տնօրեն Նորա Բաղդասարյանին:

Մարզխորհրդի նիստում քննարկված հարցերը և ընթացիկ տարում մարզպետարանի անելիքներն ամփոփելու համար խոսքը տրվում է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանին:

Հայտարարությունների համար խոսքը տրվում է

1.
2.

Օրակարգի հարցերը սպառված են

Մարզխորհրդի նիստի աշխատանքները հայտարարում եմ ավարտված:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15 փետրվարի 2010թ. **ք. Գորիս**

Մարզային խորհրդի նիստին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա. Գևորգյանը, մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ղեկավարներ:

Օ ր ա կ ա ր գ ու մ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին հաշվետվություն:

/ Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան/

2. 2010 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2009 թվականի հաշվարկային ցուցանիշների նկատմամբ:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/

3. Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ք. Խաչատրյան/

4. ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2010 թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գևորգյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին» հաշվետվությամբ հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի երկրորդ՝ «2010 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2009 թվականի հաշվարկային ցուցանիշների

նկատմամբ» թեմայով զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երրորդ՝ «Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Քաջիկ Խաչատրյանը:

Օրակարգի չորրորդ՝ «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2010 թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը /կցվում են զեկուցումները/:

Մարզխորհրդի նիստում ընդարձակ ելույթով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա. Գևորգյանը: Նշելով, որ 2009 թվականին էական տեղաշարժ է տեղի ունեցել համայնքների զարգացման գործում, նա շնորհակալություն հայտնեց համայնքների ղեկավարներին՝ համատեղ արդյունավետ աշխատանքի համար: Խոսելով ընթացիկ՝ 2010թ. հեռանկարների մասին, վերլուծելով համայնքների առջև ծառացած խնդիրները նա կարևորեց կատարողական և ֆինանսական կարգապահությունը, սեփական եկամուտների հավաքագրումը, առողջապահության և կրթության բնագավառներում կադրային ճիշտ քաղաքականությունը և այլն: Ամփոփելով խոսքը Ա. Գևորգյանը հիշեցրեց, որ ընթացիկ տարում պետք է պատշաճ մակարդակով նշվեն երկու հոբելյաններ՝ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 65-րդ և Հայաստանի Հանրապետության սահմանադրության 15-րդ տարեդարձները:

Հարցադրումներով հանդես եկավ Կապանի քաղաքապետ Ա. Աթայանը: Նա փոխվարչապետի ուշադրությունը հրավիրեց հետևյալ հարցերի վրա՝ Կապանի հիվանդանոցի, ծննդատան և մշակույթի պալատի վերանորոգումը, Կապանի քաղաքային մարզադաշտի սեփականաշնորհման վերանայման անհրաժեշտությունը, համատիրությունների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով դրանց լիազորությունների օրենսդրորեն ամրակայումը:

Հայտարարություններով հանդես եկան Գորիս քաղաքի բնակչուհիներ Արևիկ Ասատրյանը, Զոյա Շեգունցը, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գևորգյանը, Մեղրիի տարածաշրջանի Նռնաձոր համայնքի ղեկավար Մկրտիչ Մկրտչյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գևորգյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան